

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՈՒՆԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՄԱՔՈՒՐ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻՑ ՄԵԿԸ»

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՄԱԿ-Ի ԱՄԵՆԱՄՅԱ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ

Նոյեմբերի 6-8-ը ներառյալ, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, եգիպտոսի Արաբական Հանրապետություն կատարած այցի շրջանակներում, մասնակցեց ՄԱԿ-ի ամենամյա կլիմայական գագաթաժողովին:



Եգիպտոսի Շարմ Էլ-Շեյխ քաղաքում անցկացվող ՄԱԿ-ի ամենամյա կլիմայական գագաթաժողովին մասնակցեցին եւ ելույթ ունեցան ավելի քան 120 երկրների ղեկավարներ, մասնակիցների ընդհանուր թիվը հասնում էր 40 հազարի: Գագաթաժողովին ելույթ ունեցավ նաեւ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին: Իր խոսքում նա նշեց, որ կլիմայի փոփոխությունը դարձել է մարտահրավեր, եւ պետությունների ղեկավարները պատասխանատու են մարդկության եւ ապագա սերունդների համար լուծում գտնելու հարցում:

միտված գործողություններ են հարկավոր: Այս ոգով Վրաստանը դիտարկում է Փարիզի համաձայնագրի շրջանակներում (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ



Նոյեմբերի 7-10-ը Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին աշխատանքային այցով գտնվում էր Ֆրանսիայում:

Այցի շրջանակներում Վրաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Սարիա Պեյչիմովիչ-Բուրիչի, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Թիմի Քոքսի, Իսլանդիայի վարչապետ Կատրին Յակոբսդոտիրի հետ:

Կայանում հանդիպեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Օդրի Ագուլեի հետ: Հանդիպմանը քննարկված հարցերի թվում էին Վրաստանի բռնազավթված տարածքներում մշակութային ժառանգության վիճակը եւ Վրաստանի կենսաբազմազանության խնդիրները: Նշվեց, որ, բացի մարդու իրավունքների խախտումներից, Վրաստանի օկուպացված տարածքներում, մշակութային ժառանգությունը (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՌՈՂՋԱՊԱՐԻԹՅՈՒՆ

ԿԱԶՄԱՆՎԻ ՔՐՈՆԻԿ ԶԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՂԵՐԻ ԳՆԻ ՎԵՐԻՆ ՇԵՄԸ

ՍԱՀՄԱՆՓՈՎՈՒՄԸ ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ ԿՏԱՐԱԾՎԻ ԴԵՂԵՐԻ ՄՅՈՒՄ ԽՄԲԵՐԻ ՎՐԱ

Նոյեմբերի 9-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու գլխավորությամբ անցած կառավարության նիստում, գործադիրը քննարկեց Վրաստանի «Դեղերի եւ դեղագործական գործունեության մասին» օրենքի նախագծում փոփոխություններ եւ դրանից բխող օրենքների նախագծերը:



Ներկայացնելով նախագծերը Վրաստանի բռնազավթված տարածքներից հարկադիր վերաբնակների, աշխատանքի, առողջապահության, սոցիալական պաշտպանության նախարար Զուրաբ Ազարաշվիլին նշեց, որ 2023 թվականից դեղերի համար կսահմանվեն տեղեկանքային գներ՝ պետությունը սահմանելու է գնի առավելագույն սահմանաչափ, որից բարձր դեղորայքի վաճառքը չի թույլատրվի, ինչը աշխարհում տարածված պրակտիկա է: Բարեփոխման նպատակն է՝ բարձրացնել որակյալ դեղերի մատչելիությունը, ապահովել ար-

դար գներ եւ դեղագործական մրցունակ ու թափանցիկ շուկա: Նախնական հաշվարկներով տեղեկատու գների սահմանումը, միջինը 40 տոկոսով, կնվազեցնի դեղերի ինքնարժեքը: Առաջին փուլում կսահմանվեն տեղեկանքային գներ քրոմիկ հիվանդությունների համար նախատեսված դեղերի համար, աստիճանաբար գների (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԵՈՒՍՏԱՆՉՐՈՒՅՑ՝ ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ ԵՎ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՄԻՋԵՎ



Նոյեմբերի 6-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հեռախոսազրույց ունեցավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:



Վրաստանի կառավարության աշխատակազմի տեղեկատվությանը կողմերը քննարկել են վրաց-հայկական համագործակցության օրակարգի տարբեր հարցեր: Բացի այդ, Հայաստանի վարչապետը Վրաստանի իր գործընկերոջը իրազեկել է հոկտեմբերի 31-ին, Սոչիում տեղի ունեցած Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի առաջնորդների եռակողմ հանդիպման արդյունքների մասին: Իրակլի Դարիբաշվիլին եւ Նիկոլ Փաշինյանը մտքեր են փոխանակել նաեւ տարածաշրջանային համագործակցության առնչվող հարցերի շուրջ:

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՇՈՏ ՍՄԲԱՏՅԱՆԻՆ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՄՊՍԵԻ ՀԱՆՁՆՈՂԱԿԱՆ ՀԱՆԳԻՊՈՒՄՆԵՐԸ

Նոյեմբերի 10-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցավ Վրաստանում Հայաստանի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանի հետ:



Ճանաչողական բնույթի հանդիպմանը Իրակլի Դարիբաշվիլին շնորհավորեց Աշոտ Սմբատյանին՝ Վրաստանում Հայաստանի դեսպանի պաշտոնի ստանձնման կապակցությամբ եւ մաղթեց արդյունավետ աշխատանք Վրաստանում: Հանդիպմանը կողմերը մտքեր փոխանակեցին Վրաստանի եւ Հայաստանի միջեւ ավանդական բարեկամական հարաբերությունների եւ բազմկողմ համագոր-

ծակցության հեռանկարների շուրջ: Անդրադարձ կատարվեց տարածաշրջանային անվտանգության վերաբերող հարցերին, ընդգծվեց Հարավային Կովկասում տեսական խաղաղության եւ կայունության հաստատման անհրաժեշտությունը: Նշվեց, որ Վրաստանը պատրաստ է շարունակել հարեւան երկրների միջեւ միջնորդության իրեն վստահված առաքելությունը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԿՐՈՆԻ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱԿ-Ի ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ՍԵՄԻՆԱՐ՝ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՈՍԳՆՈՐԴ Տ. ԿԻՐԱՎՈՍ ՎԱՐՊԱՊԵՏ ԴՎԱԹՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՈՒԹՅԱՐ

Նոյեմբերի 8-ին Բորժոմիում, «Բորժոմի Լիկանի» հյուրանոցում, Կրոնի հարցերով պետական գործակալության եւ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF) կազմակերպմամբ, մեկնարկեց «Կրոնի ազատությունը եւ երեխայի լավագույն հետաքրքրությունները» եռօրյա սեմինարը:

Սեմինարին մասնակցում էին Վրաստանում գրանցված կրոնական համայնքների առաջնորդները, այդ թվում՝ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը:

Սեմինարի նպատակն էր՝ երեխաների իրավունքների պաշտպանության հարցերում կրոնական առաջնորդների գիտելիքի խորացումը եւ այնպիսի կարելու (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՌՈՂՋԱՊԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՍՏԱՆԱՎԻ ՔՐՈՆԻԿ ՀԻՎԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՂԵՐԻ ԳՆԻ ՎԵՐԻՆ ԵՆՄԸ

ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄԸ ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ ԿՏԱՐԱԾՎԻ ԴԵՂԵՐԻ ՄՅՈՒՄ ԽՄԲԵՐԻ ՎՐԱ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Կարգավորման մեխանիզմը կտարածվի նաեւ դեղերի այլ խմբերի վրա:

Քննարկված հարցերի թվում էր նաեւ «Համընդհանուր առողջապահությանն անցնելու նպատակով իրականացվելիք որոշ միջոցառումների մասին» որոշման փոփոխությունը:

Մասնավորապես, համընդհանուր առողջապահական ծրագրում կմեկնարկվի հետինսուլտային վերականգնողական ծրագիրը եւ գլխի ու ողնուղեղի տրավմատիկ վնասվածքի հետևանքով ստեղծված վիճակի վերականգնողական ծրագիրը, որը հիվանդներին հնարավորություն կտա ժամանակին վերականգնել ֆունկցիոնալ հնարավորությունները եւ կանխել խիստ սահմանափակումների ձեւավորումը: Ծրագիրը ներառում է վերականգնողական ամբողջական փաթեթ: Հետինսուլտային, գլխի եւ ողնուղեղի վերականգնման բաղադրիչի մեկամսյա բյուջեն կազմում է 919250 լարի: Ծրագրերի տարեկան բյուջեն կազմում է 11 մլն լարի:

Հարկ է նշել, որ 2023 թվականից օկուպացված տարածքներից հարկադիր վերաբնակների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության բյուջեն կավելանա մոտավորապես 770 մլն լարիով, ինչը թույլ կտա գերա-տեսչությանն ավելացնել ինչպես համընդհանուր առողջապահության, այնպես էլ՝ այլ ոլորտների ֆինանսավորումը:



ԹԱՄԱԶ ԲԵՏԱՆԵՎԸ՝ ՀԱՐՎԱԿՅԻՆ ՕՍԵԹԻԱՅԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ



Ինչպես նշվել է Վրաստանի կառավարության պաշտոնական կայքում, Հարավային Օսեթիայի վարչակազմի ղեկավար է նշանակվել Թամազ Բեստաեւը:

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, Թամազ Բեստաեւի հետ հանդիպմանը, նրան շնորհավորել է նոր պաշտոնում նշանակվելու կապակցությամբ եւ հաջողություններ մաղթել հետագա աշխատանքում՝ հայցելով իր աջակցությունը:

Նշենք, որ Թամազ Բեստաեւը նշված պաշտոնում փոխարինել է Դիմիտրի Սա-նակեւին, ով պաշտոնը լքել է վերջերս:

Վերջին 15 տարիներին Թամազ Բեստաեւը ղեկավարում էր Հարավային Օսեթիայի վարչակազմի առողջապահության եւ սոցիալական ապահովության ծառայությունը:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ (11 ՄՈՅԵՄԲԵՐԻ)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:

Տարադրամ	Լարի
1 ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.7261
1 ԵՎՐՈ	2.7114
100 ՌՈՒՔԼԻ	4.4477
1000 ԴՐԱՄ	6.8928

COVID-ի ՎԻՃԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼԵՎ ՉԻ ՀՐԱՊԱՐԱԿՎԻ

...ԹԵՎ ԱՅՍ ՀԱՆՊԱՏԱՔԸ ՀԻՎԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՌՈՒՄ ԳԻ ԵՆԹԱԳՐՈՒՄ



Առողջապահության նախարարությունն այլևս չի հրապարակի Covid-ի վիճակագրությունը: Այս մասին հայտնեցին Վրաստանի առողջապահության նախարարությունից:

Գ Ե Ր Ա - տեսչությունից պարզաբանել են, որ վերջին շրջանում երկրում գրանցվել է վարակի նվազման միտում, եւ համաճարակային իրավիճակը կայուն է: Նկատի ունենալով վերջը նշվածը, նախարարության տեղեկատվության համաձայն, Covid-ի վիճակագրության հրապարակման կարիք այլևս չկա: Թեւեւ, նշվում է նաեւ, որ դա ինքնահանգստացման պատճառով է դառնում եւ հարկ է պահպանել զգուշություն:

«Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջության ազգային կենտրոնը կնշակի Covid-ի հետ կապված տվյալները՝ սովորական վիճակագրական հաշվետվության նպատակով եւ հրապարակայնորեն կկիսվի շահագրգիռ կողմերի հետ»,- ասված է Առողջապահության նախարարության հայտարարության մեջ:

Հիշեցնենք, որ համավարակի ակտիվ ժամանակահատվածում «Covid-19»-ով վարակվածների, հոսպիտալացումների եւ մահերի վիճակագրությունը կատարվում էր նաեւ ամեն օր, մայիսից պաշտոնական վիճակագրությունը հրապարակվում էր Հիվանդությունների վերահսկման կենտրոնի կայքում՝ շաբաթը մեկ անգամ, եւ վերջում, հոկտեմբերի սկզբին՝ արդեն մեկ ամսվա տվյալները:

ՏԱՐԱԾԱՆԵՐԱՆ

ՎԵՐԱՕԾՎԵՑ ԱՄԱԼՔԱՆՔԻ ԿՈՐԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԿԱՆԳԵՎԱԾ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ ԵՎԵՂԵՅԻՆ



Ախալքալաքի մունիցիպալիտետի Կորիս գյուղում, ձեռնարկ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արմավիրի (Հայաստան) թեմի առաջնորդ Տեր Սիոն արքեպիսկոպոս Աղամյանի ու մասնակցությամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի, Սամցխե-Ջավախեթի եւ Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տեր Նշան վարդապետ Հմայակյանի, Քվեմո Քարթլիի տարածաշրջանի հայկական համայնքների հոգեւոր հովիվ Տեր Զավեն վարդապետ Յազիչյանի, Ախալքա-



լաքի Սուրբ Խաչ առաջնորդանիստ եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Նարեկ քահանա Տիգրանյանի, Թբիլիսիի Սուրբ Գեորգ եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Վիրապ քահանա Ղազարյանի, Էջմիածնի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Մկրտիչ քահանա Սուշարյանի տեղի ունեցավ, Կորիս գյուղի նվիրյալ զավակների օժանդակությամբ, վերականգնված Սուրբ Ստեփանոս եկեղեցու վերածնունդի արարողությունը: Արարողությանը ներկա էին Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սամվել Մանուկյանը, Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետ Մելքոն Մակարյանը, սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանը, բազմաթիվ հյուրեր:

Եկեղեցու օծման արարողությանը Տեր Նարեկ քահանա Տիգրանյանն ու Տեր Վիրապ քահանա Ղազարյանը ջրով ու գինով լվացին եկեղեցու Սուրբ սեղանը, 16 սյուները եւ մկրտության ավազանը: Ապա Տեր Սիոն արքեպիսկոպոս Աղամյանը Սրբալույս Մյուռզնով կատարեց եկեղեցու օծումը: Այնուհետեւ կատարվեց մատաղի օրհնություն: Տոնական օրն ավարտվեց ժողովրդական տոնահանդեսով:

ՍՈՒՄԱՆՆԱ ԽԱԶՍՐՅԱՆ

ԻՐԱԿԼԻ ԼԱԶԱՐԱՇՎԻԼԻՆ ԵՎ ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Նոյեմբերի 9-ին, Ախալցխի մունիցիպալիտետի քաղաքապետ Իրակլի Լազարաշվիլին, փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանը եւ առողջապահության ու սոցիալական բաժնի աշխատակիցները հանդիպում ունեցան Սամցխե-Ջավախեթի զարգացման կենտրոնի ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը կողմերը համարագումարեցին համատեղ իրականացրած նախագծերը եւ քննարկեցին առաջիկա ծրագրերը: Սամցխե-Ջավախեթի զարգացման կենտրոնի ղեկավար Նինո Լոնիձեն տեղական ինքնակառավարման ներկայացուցիչներին ներկայացրեց կազմակերպության ծրագրերն ու մանրամասն տեղեկատվություն հանձնեց իրականացված նախագծերի վերաբերյալ: Իր հերթին, Ախալցխի մունիցիպալիտետի փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանը խոսեց մունիցիպալիտետում գործող սոցիալական ծրագրերի մասին, առանձնակի կանգ առավ բազմազավակ ընտանիքների աջակցության, սոցիալական գործակալների ինստիտուտի հզորացման ու քաղաքապետարանի համապատասխան ծառայության աջակցության հարցերին:



Հատկանշական է, որ Սամցխե-Ջավախեթի զարգացման կենտրոնն արդեն մի շարք տարիներ, «World vision-Վրաստան»-ի ֆինանսական աջակցությամբ, մունիցիպալիտետի քաղաքապետարանի հետ համագործակցությամբ, մի շարք նախագծեր է իրականացրել սոցիալական եւ նախադպրոցական դաստիարակության ոլորտներում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՐ ԵՎ ՖԵՐՄԵՐ ԿԱՆԱՆՑ ՇԵՏ

Ախալցխի մունիցիպալիտետում դեռելու 2008 թվականից ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից հռչակված գյուղում ապրող կանանց միջազգային օրվա կապակցությամբ, կայացավ հանդիպում գյուղատնտեսության, պարենի անվտանգության ոլորտներում աշխատող կանանց հետ: Հանդիպմանն ընդգծվեց տնտեսական իրավիճակի բարելավման նշանակությունը:



Միջոցառմանը մասնակցեցին Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի պետական լիազոր-նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին, Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Եկա Սեփաշվիլին, Սամվել Մանուկյանը, Սմբատ Կյուրեղյանը, Ախալցխի մունիցիպալիտետի քաղաքապետ Իրակլի Լազարաշվի-

լին, սակրեբուլոյի նախագահ Դավիթ Լոնիձեն, երկրամասային եւ տեղական իշխանության ներկայացուցիչներ:

Միջոցառման անցկացվեց Ախալցխի մունիցիպալիտետի քաղաքապետարանի եւ գեներալային իրավահավասարության բաժնի ու կանանց կազմակերպության համատեղ ջանքերով:

ՀԱՐՑՈՒՄ

ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՐՍԻ ՀԱՐՑՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄՆՈՒՄ Է ԱՆՓՈՓՈՒՑ



տասխանների մակարդակը՝ 74 տոկոս:

Միջազգային հանրապետական ինստիտուտը (IRI) Վրաստանի տարածքում անցկացրեց հերթական հարցումը: Հետազոտությունն իրականացվել է 2022 թվականի սեպտեմբերի 13-ից հոկտեմբերի 2-ը, Միջազգային հանրապետական ինստիտուտի հետազոտությունների կենտրոնի Բալթյան ուսումնասիրությունների և Գեյլաի կազմակերպության ներկայացուցիչ ղոկտոր Ռասա Ալիշաուսկինի կողմից: Հետազոտական դաշտային աշխատանքներն իրականացվել են IPM-ի կողմից: Տվյալները հավաքագրվել են դեմաոդեմ հարցազրույցների միջոցով: Քվեարկությունն ընդգրկել է 1500 չափահաս բնակիչ: Տվյալները դասակարգվել են ըստ տարիքի, սեռի, տարածաշրջանի և բնակավայրի չափի: Միջազգային սահմանը +/-2,5% է, պատասխանների մակարդակը՝ 74 տոկոս:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՂՄ Է ԵՎՐԱՍԻՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՆԱՏՕ-Ի ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆԸ

IRI-ի հետազոտության համաձայն, այն հարցին, թե կողմ են, արդյոք, Վրաստանի անդամակցությանը եվրամիությանը, հարցվածների 70 տոկոսը լիովին համաձայն է եվրամիությանն անդամակցությանը, 15 տոկոսը որոշ չափով է համաձայն, երեք տոկոսը՝ որոշ չափով համաձայն չէ, 7 տոկոսը կտրականապես դեմ է, իսկ հինգ տոկոսը՝ պատասխան չուներ:

Հարցին առնչվող մարտին անցկացված հարցման ժամանակ՝ 74 տոկոսը վճռականորեն կողմ էր անդամակցությանը, իսկ 14 տոկոսը՝ մասամբ համաձայն:

Բացի այդ, եթե հարցվածների 64 տոկոսը կտրականապես կողմ է միանալու Հյուսիսատլանտյան դաշինքին, ապա 14 տոկոսը՝ մասամբ կողմ, 5 տոկոսը՝ մասամբ դեմ, 12 տոկոսը կտրականապես դեմ է, իսկ հինգ տոկոսը պատասխանել է՝ ոչ:

Մարտին անցկացված հարցման համաձայն՝ 60 տոկոսը կտրականապես կողմ է եղել ՆԱՏՕ-ին միանալուն, 15 տոկոսը մասամբ էր կողմ, 8 տոկոսը՝ մասամբ դեմ, 12 տոկոսը՝ կտրականապես դեմ էր, իսկ հինգ տոկոսը՝ պատասխան չի ունեցել:

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱՋԱՆՔԸ» ՄԵԾ ԱՌԱՎԵԼՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋ Է ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՑԱՆԿՈՒՄ

IRI-ի հետազոտությունների համաձայն՝ հարցին, թե ո՞րն օգտին կքվեարկեին, եթե այս շաբաթ անցկացվեին խորհրդարանական ընտրությունները, հարցվածների 25 տոկոսը պատասխանել է, որ կքվեարկի «Վրացական երազանքի» օգտին, իսկ 12 տոկոսը՝ կաջակցի «Ազգային շարժմանը»:

Ինչ վերաբերում է մյուս քաղաքական կուսակցություններին, ապա պատկերը հետևյալն է. «Հանուն Վրաստանի» Գիորգի Գախարիա» կուսակցության օգ-

տին կքվեարկեի 3 տոկոս, «Գիրչի» ավելի շատ ազատություն՝ Ջուրաբ Գիրչի Ջափարիձեի» օգտին՝ 3 տոկոս, «Ռազմավարություն՝ Աղմաշենբեկի-Գիրգի Վաշաձե»՝ 2 տոկոս, «Դրոա» էլենե խոշտարիա»՝ 2 տոկոս, «Լեյբորիստական կուսակցություն՝ Շալվա Նաթելաշվիլի»՝ 2 տոկոս, «Ժողովրդական կուսակցություն՝ Աննա Դոլիձե»՝ 2 տոկոս, «Գիրչի»՝ 2 տոկոս, «Հայրենասերների դաշինք»՝ 2 տոկոս, «Լեյո»՝ 1 տոկոս, «Մոքալաքեբի»՝ 1 տոկոս:

6 տոկոսը քվեարկելուց հրաժարվել է, 16 տոկոսը հարցին պատասխան չի ունեցել, 7 տոկոսը հրաժարվել է պատասխանել:

Հատկանշական է այն հանգամանքը, որ IRI-ի հարցին, թե ո՞ր կուսակցության օգտին ոչ մի դեպքում չէր քվեարկի, 33 տոկոսը նշում է՝ «Ազգային շարժում», 30 տոկոսը՝ «Վրացական երազանք»:

ԱՄԵՆԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՑԵՐՆ ԱՌՆՉՎՈՒՄ ԵՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆԸ

Միջազգային հանրապետական ինստիտուտի հարցման արդյունքներով, երկրի բնակչության համար ամենահուզող հարցը կապված է էկոնոմիկայի և գործազրկության հետ:

Ըստ հարցման արդյունքների՝ վերոնշյալ թեման անհանգստացնում է բնակչության 41 տոկոսին, 18 տոկոսը, էկոնոմիկայից բացի, նշել է կենսական նվազագույնը և բարձր գները: 7 տոկոսի համար՝ գլխավոր մարտահրավերը աղքատությունն է:

ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏՈՒԹՅՈՒՆ Է ՏՎԵԼ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Միջազգային հանրապետական ինստիտուտի անցկացրած հարցման արդյունքներով՝ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը, 88 տոկոսով, շարունակում է գլխավորել վարկանիշային առյուսակը, 51 տոկոսով նրան հաջորդում է Թբիլիսիի քաղա-

քապետ Կախա Կալաձեն, երրորդ տեղում, 44 տոկոսի արդյունքով, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին է:

Հարցվածների 40 տոկոսը հավանություն է տվել ընդդիմադիր գործիչ Աննա Դոլիձեի գործունեությանը, 38 տոկոսը պաշտպանել է Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլուն, ընդդիմադիր գործիչ Դավիթ Ուսուփաշվիլուն և նախկին ժողովրդական պաշտպան Նինո Լոնջարիային: Հատկանշական է այն փաստը, որ հարցվածների 37 տոկոսը գերադասությունը տվել է Վրաստանի նախկին վարչապետ Գիորգի Գախարիային ու ընդդիմադիր գործիչ Գիորգի Վաշաձեին: 36 տոկոսը հավանություն է տվել Բիձինա Իվանիշվիլու գործունեությանը, իսկ 34 տոկոսը՝ Իրակլի Կոբախիձեի: Վարկանիշային ցուցակում 33 տոկոսի աջակցությունն է ստացել նաև Միխեիլ Սասակաշվիլին, էլենե խոշտարիան, Շալվա Նաթելաշվիլին, 32 տոկոսով՝ Նիկա Մելիան:

Խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլու գործունեությանը հավանություն է տվել հարցվածների 28 տոկոսը:

ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔՈՎ՝ ՈՒՄԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԵՐՎԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՒՄ ԱՑԱՆԿԱԼԻ Է

Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) հրապարակած հասարակական կարծիքի հարցման արդյունքներով՝ Վրաստանի քաղաքացիները չեն աջակցում Ռուսաստանի քաղաքացիների ներկայությանը երկրում: Հարցվածների 78 տոկոսը դեմ է, որ Ռուսաստանի քաղաքացին իրավունք ունենա՝ առանց վիզայի Վրաստան մուտք գործել, բիզնես գրանցել կամ գույք ձեռք բերել:

Հետազոտությունները ցույց են տվել, որ Վրաստանի քաղաքացիները դեմ են ռազմական մոբիլիզացիայի փախչող ռուսների զանգվածային ներհոսքին երկիր ել գտնում են, որ Վրաստանի կառավարությունը պետք է հաշվի առնի հասարակության այս տրամադրությունը:

ԱՄԵՆԱՄԵԾ ՄՊԱՌՆԱԼԻՔՆ ԱԿՆԿԱԿՈՒՄ Է ՈՒՄԱՍՏԱՆԻՑ

Միջազգային հանրապետական ինստիտուտի կողմից անցկացված հարցման արդյունքներով՝ քաղաքացիների 89 տոկոսը գտնում է, որ ամենամեծ քաղաքական սպառնալիքը ակնկալվում է Ռուսաստանից:

Երկրի համար, բնակչության 99 տոկոսի կարծիքով, Ռուսաստանը լուրջ վտանգ է ներկայացնում: 11 տոկոսը երկրի սպառնալիքն ակնկալում է Թուրքիայից, 6 տոկոսը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներից...

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԿՈՐԱ ԳՎԵՆԵՏԱԶԵ. «ՓԵՏՐՎԱՐԻՑ ԳՆԱԾՆ ԿՍԿՍԻ ՆՎԱԶԵԼ»



Վրաստանի Ազգային բանկի նախագահ Կորա Գվենետաձեի համոզմամբ՝ այլ հավասար պայմաններում գնաճը կմնա նույն մակարդակի վրա, ինչ հիմա, եթե նկատի ունենանք հունվարը: Արդեն փետրվարին նկատելի նվազում պետք է լինի և դրա նախադրյալներն ու որոշիչ գործոնները դրամավարկային քաղաքականության խիստությունն է:

- Մենք ձեռնարկել ենք նաև մակրոպոտենցիալ միջոցառումներ: Մենք տեսնում ենք, որ համաշխարհային ապրանքային շուկաներում նկատվում է ինդեքսների անկում, և դա պետք է արտացոլվի Վրաստանում, միաժամանակ լարիի փոխարժեքը կայուն է, ինչը նույնպես ունի իր պայմանները: Ինչպես գիտեք, զբոսաշրջության վերականգնումը բավական արագ ընթացավ, միաժամանակ միգրանտների հոսքն ունեցավ իր ազդեցությունը: Կարծում են, այս հանգամանքները հուսադրում են, որ գնաճը կսկսի նվազել փետրվարից, այլ հավասար պայմաններում, և այն պետք է մոտենա նպատակային ցուցանիշին՝ տարվա երկրորդ կիսամյակում,- հայտարարեց Կորա Գվենետաձեն:

ԿՆԵՐԴՐՎԵՆ ՄԱՍՆԱՎՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՄԻՆԵՄԱՆԵՐ

Նոյեմբերի 7-ին, Վրաստանի խորհրդարանի՝ Եվրոպայի հետ ինտեգրման և մարդու իրավունքների պաշտպանության ու քաղաքացիական ինտեգրման հանձնաժողովների համատեղ նիստում քննարկվել է «Կամավոր մասնավոր կենսաթոշակի մասին» օրինագիծը:

Ըստ զեկուցողի՝ Էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարության Կապիտալ շուկայի զարգացման և կենսաթոշակային բարեփոխումների վարչության պետ Գիորգի Գուրգենիձեի՝ Վրաստանի բոլոր քաղաքացիներին հնարավորություն կտրվի միանալ կամավոր մասնավոր կենսաթոշակային սխեմաներին կամ՝ ինքնուրույն ստեղծել դրանք: Նման իրավունք տրված է սուբյեկտների լայն շրջանակի, այդ թվում՝ գործատուների ասոցիացիաների, աշխատողների ասոցիացիաների և մասնագիտական կազմակերպությունների:

Ցանկացած անձ նաև իրավունք ունի միանալ անհատական կենսաթոշակային

սխեմաներին՝ անկախ զբաղվածությունից: Օրինագիծը թույլ է տալիս անդամակցել մի քանի կենսաթոշակային սխեմաների:

Օրենքն ընդունելու դեպքում՝ կամավոր մասնավոր կենսաթոշակային սխեմաները կարգավորող վրացական օրենսդրությունը կբարելավվի, և այն կմոտեցվի Եվրամիության մեջ գործող սկզբունքներին ու շրջանակներին:

- Նման կանոնների ի հայտ գալով՝ բոլոր կատեգորիաների առարկաները կընդգրկվեն, և բոլորը հնարավորություն կունենան երկարաժամկետ խնայողություններ ստեղծել: Բացի այդ, պետք է նշել, որ երկրում երկարաժամկետ խնայողությունների կուտակումը հնարավորություն է տեղական կապիտալի շուկայի զարգացման համար, քանի որ կուտակված միջոցները, երկարաժամկետ հեռանկարում, հնարավոր կլինի ներդնել տեղական կապիտալի շուկայում, որն արտահայտվում է կապիտալի ավելի արդյունավետ տեղաբաշխմամբ և, իր հերթին, երկրի տնտեսության աճի նախադրյալներից մեկն է,- ասաց Գիորգի Գուրգենիձեն:

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ ՀՆԱՐԱՎՈՐ ԿԼԻՆԻ ՄՏԱՆԱԼ 2025 ԹՎԱԿԱՆԻՑ

Վրաստանի էկոնոմիկայի նախարարությունն աշխատում է 2018 թվականին ընդունված «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխությունների վրա:

Գործող օրենքով՝ պարտադիր կենսաթոշակային համակարգի մասնակիցն իրավունք չունի վճարումներ փոխանցել մասնավոր հաշվին կամ կանխիկացնել գումարային միջոցները, սակայն, ինչպես լրատվամիջոցներին պարզաբանել է էկոնոմիկայի նախարարության կենսաթոշակային բարեփոխումների վարչության պետ Գիորգի Գուրգենիձեն, աշխատանքներ են տարվում այս տեսակի սահմանափակումները մինչև 2025 թվականը վերացնելու ուղղությամբ:

Արդեն պատրաստ է օրինագիծը, որը նախատեսում է տարբեր հարկային արտոնություններ՝ երկրում մասնավոր կենսաթոշակային սխեմաների զարգացմանը նպաստելու նպատակով:

- Այն քաղաքացիները, ովքեր ցանկություն ունեն կամավոր գումար տրամադրել թոշակային ֆոնդին, իհարկե, կարող են, սակայն այս փուլում աշխատում ենք այն ուղղությամբ, որ հնարավոր լինի ստանալ պետական պարտադիր կենսաթոշակային ֆոնդ ուղարկված գումարը կամ՝ գումարի մի մասը,- ասել է Գիորգի Գուրգենիձեն:

էջը պատրաստեց ՍԻՄՈՆ ԿԻԼԱԶԵՆ